



15 դեկտեմբերի, 2010թ.

Ե-1811

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ  
ՊԱՐՈՆ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Նախագահ

ՀՀ Հանրային խորհրդի նիստում 06.12.2010թ. հանրային խորհրդի անդամների հետ Ձեր ունեցած հանդիպման ժամանակ Դուք մտահոգություն հայտնեցիք և խիստ քննադատության ենթարկեցիք ՀՀ Ազգային ժողովի կողմից 27.10.2010թ. ընդունված <Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին> ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել ս. թ. դեկտեմբերի 1-ին:

Ձեր ելույթն արժանացել է Հանրապետության բնակչության ճնշող մեծամասնության հավանության, որոնք անտարբեր չեն ապագայում մեր պետության սոցիալ-տնտեսական և պաշտպանական ներուժի ամրապնդման հիմնախնդիրներին:

Սակայն, ըստ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի <Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին> ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նոր նախագծի նախապատրաստման և քննարկման գործընթացը, ինչպես նաև դրա հասարակական լուսման անցկացումը և ՀՀ Ազգային ժողովում քննարկումները որոշակի ժամանակ են պահանջելու, որի ընթացքում, կսահմանափակվեն ս. թ. դեկտեմբերի 1-ից ուժի մեջ մտած <Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին> ՀՀ Օրենքով նախատեսված շահառուների իրավունքներն ու շահերը:

Հետևաբար, վերոշարադրյալը հաշվի առնելով, նպատակահարմար է անհապաղ քայլեր ձեռնարկել <Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին> ՀՀ օրենքը ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու ուղղությամբ, կամ, ելնելով սույն հարցի լուծման հրատապությունից, հետաձգել դրա գործողության ժամկետը և գործողության մեջ թողնել ՀՀ Ազգային ժողովի կողմից 24.10.2005թ. ընդունված <Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին> ՀՀ օրենքը՝ մինչև <Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին> ՀՀ օրենքի՝ նոր խմբագրությամբ, ուժի մեջ մտնելը:

Հարգանքով՝

ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ  
Գործադիր տնօրեն